ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հրատարակում ենք մեր Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ ընդհանուր վերնագրով աշխատանքների Գ. Պրակը: Նախընթացները արտատպութիւններ էին մեր նախապէս գրած յօդուածների այլ եւ այլ պարբերականների մէջ մաս առ մաս, որ ի մի հաւաքելով, հրատարակել ենք առանձին գրքերով: Այս Պրակը տպագրւում է նոյն շարքում, առանց նախապէս երեւալու պարբերականների մէջ, եթէ չհաշուենք մի փոքրիկ հատուածը՝ «Հայ Եկեղեցիների Գմբեթաւորման Խնդիրը» «Հայաստանի Կոչնակ»-ի մէջ:* Այսպիսի ծաւալով մի գիրք, յատկապէս պատկերների շատութեան պատճառով, անկարելի էր որ եւ է պարբերականի մէջ զետեղել, բայց եւ այնպէս լոյս է տեսնում այն մեր Պրակների շարքում նման շարժառիթներով, այսինքն հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան մի տեսակ նախապատրաստութիւն, որոշ խնդիրների կամ երեւոյթների լուսաբանութեան հետ կապուած: Կը յաջողուի՞ մեզ ամբողջական դարձնել գործը, Աստուծոյ կամքն է, մեր կեանքի տեւողութեան եւ գիտական աշխատանքներով զբաղուելու յարմարութիւններից կախուած, բայց աշխատում ենք այդ ծրագրով: Մամուլի տակ է Դ. Պրակը, իսկ Ե.-ը պատրաստւում է:

Մենք կը ցանկայինք աւելի խորանալ այս աշխատութեան ուսումնասիրութեան մէջ, նիւթերի բերած նորութիւնն ի նկատի ունենալով, բայց պաշտօնի բերմամբ բազմատեսակ զբաղումները արգելք եղան, հակառակ մեր ցանկութեան: Սակայն հաւատում ենք, որ ի զուր չէ նորա հրատարակութիւնը եւ այս վիճակում. այս նիւթերը պէտք է խօսեն ժամանակին իրենք իրենց համար, գրաւելով մասնագէտների ուշադրութիւնը եւ աւելի լայն չափով ուսումնասիրութեան եւ համեմատութեան ենթարկուին. ցաւում ենք միայն, որ Աղցի, Օձունի գերեզմանական կոթողի եւ Պտղավանքի քանդակների լուսանկարները ձեռքի տակ չունինք այժմ, որոնք աւելի պիտի բարձրացնէին արժէքը նաեւ ընդհանուր քրիստոնէական արուեստի պատմութեան համար: Բայց եթէ այս աշխատութիւնը առիթ լինի նման նիւթերի հաւաքման եւ արուեստի պատմաբաններին հետաքրքրէ ամենադոյզն չափով, Ստրչիգովսկու եւ Թորամանեանի մեծ աշխատանքների կողքին իբրեւ ամենահամեստ մի լումայ, մենք լիովին վարձատրուած կը համարենք մեզ: Այստեղ չօշափւում է միայն նախնական հայ արուեստի մի հոսանքը. աղերսը իւր հարաւ-արեւմտեան դրացիների հետ:

Ստրչիգովսկիի* մեծ գործի լոյս տեսնելուց յետոյ՝ Թորամանեանի աշխատութիւնների ժողովածուի հրատարակութիւնը,** բարձրագոչ աղաղակում են հայ ժողովրդի կատարած դերի մասին Առաջաւոր Ասիայի քաղաքակիրթ ազգերի շարքում: Ինչքա՛ն եւ մեծ, գնահատելի գործ է կատարուած յիշեալ գիտնականների, Մառի, Օրբէլիի, Բախմանի,† Բալտրուշայիտիսի,†† եւ այլոց ձեռքով, բայց դեռ կատարելիք շատ գործ կայ, անյայտը ի յայտ բերելու, որպէս զի այլ եւ այլ կողմերից եկած մեծ կամ փոքր ճառագայթներով լուսաւորուի մեր անցեալ ստեղծագործութեան պատկերը եւ արժանաւոր տեղը բռնէ ազգերի եւ նրանց քաղաքակրթութեան պատմութեան մէջ: Հայ ճարտարապետութեան զարդագրութեան ժողովածուն ժամանակագրական կարգով եւ տեղերի ցուցմամբ, օրինակ, ո՛րքան առատ նիւթ կը տար Առաջաւոր Ասիայի ազգերի եւ հայ արուեստի յարաբերութեան եւ լուսաբանութեան համար: Մենք գիտենք, որ նկարիչ Ֆէթվաճեանը այդպիսի մի մեծ ժողովածու ունի, անձամբ հաւաքած իւր ձեռքով հայ վանքերի վրայից եւ մաքրագրած, որ երկար տարիներէ ի վեր մնում է առանց տպագրութեան:

Այս գործը որքան եւ մեծածաւալ չէ, զգալի նիւթական զոհողութիւն, աշխատանք եւ ժամանակ է պահանջել մեզանից, բայց

---

*«Հայաստանի Կոչնակ» 1939. Հոկտեմբեր 14:

*Die Baukunst der Armenier.

**Թորոս Թորամանեան. Նիւթեր Հայկական Ճարտարապետութեան Պատմութեան. Երեւան. 1942:

†Bachman W. Kirchen und Moscheen in Armenien und Kurdistan. Leipzig. 1913.

††Etudes sur l'Art médiéval en Georgie et en Arménie. Paris. 1929.